ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2023թ. ապրիլի 6 -ին, N 94 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի թիվ 129-Ն որոշման հավելված 1-ի 2-րդ, 11-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ կետերը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի՝ «Նոր Երզնկայի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար՝ 2023 թվականի հունիսի 8-ին ժամը 11 ^{00}-ին անցկացնել բաց մրցույթ:
2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:
3. Անձնակազմի կառավարման բաժնին՝ ապահովել վերը նշված հայտարարության հրապարակումը Հայաստանի Հանրապետության մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքէջում, azdarar.am-ում և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պաշտոնական ինտերնետային կայքէջում:

Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 4/6/2023 16:39:33 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս.ՄՈՎՍԻՍՅԱՆ